ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին Կոնվենցիայում փոփոխություն կատարելու մասին

Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության Ասամբլեան,

գումարելով իր 23-րդ նիստը Մոնրեալում 1980 թվականի հոկտեմբերի 6-ին,

նկատի առնելով օդանավերի վարձակալության, նավավարձման և միջազգային թռիչքների ընթացքում դրանց փոխանակման մասին Ա 21-22 և Ա 22-28 որոշումները,

նկատի առնելով Իրավաբանական կոմիտեի 23-րդ նիստի կողմից մշակված՝ Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին կոնվենցիայում փոփոխություն կատարելու մասին որոշման նախագիծը,

նկատի առնելով, որ Պայմանավորվող պետություններն ընդհանուր ցանկություն են արտահայտում սահմանել դրույթ, որը կնախատեսի օդանավի գրանցման պետության որոշ գործառույթների և պարտականությունների փոխանցումը այդ օդանավը շահագործող պետության՝ օդանավի վարձակալության, նավավարձման, փոխանակման և նման այլ գործողությունների դեպքում,

անհրաժեշտ համարելով վերը նշված նպատակներով փոփոխություն կատարել 1944 թվականի դեկտեմբերի 7-ին Չիկագոյում ստորագրված Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին Կոնվենցիայում,

1. Հաստատում է, վերը նշված Կոնվենցիայի 94-րդ հոդվածի «ա» դրույթներին համապատասխան նշված Կոնվենցիայում հետևյալ առաջարկված փոփոխության կատարումը.

83-րդ հոդվածի տակ ավելացնել նոր՝ 83bis հոդվածը.

«Հոդված 83bis

Որոշ գործառույթների և պարտավորությունների փոխանցում

ա/ Անկախ 12-րդ, 30-րդ, 31-րդ հոդվածների և 32-րդ հոդվածի «ա» դրույթների, այն դեպքերում, երբ որևէ Պայմանավորվող պետության գրանցում ունեցող օդանավը վարձակալության, նավավարձման, փոխանակման կամ ցանկացած այլ նման պայմանագրի հիման վրա շահագործվում է որևէ այլ Պայմանավորվող պետության տարածքում հիմնական գործունեության իրականացման վայր ունեցող կամ, այդպիսի վայրի բացակայության դեպքում, այդ Պետության տարածքում մշտապես բնակվող շահագործողի կողմից, գրանցման Պետությունն այդ Պետության հետ կնքված համաձայնագրի համաձայն կարող է նրան փոխանցել 12-րդ, 30-րդ, 31-րդ հոդվածների և 32-րդ հոդվածի «ա» կետի դրույթներով սահմանված՝ որպես օդանավի գրանցման Պետության՝ այդ օդանավի նկատմամբ իր բոլոր գործառույթները և պարտականությունները, կամ դրանց մի մասը: Գրանցման Պետությունն այսպիսով ազատվում է փոխանցված գործառույթների և պարտականությունների կատարման համար ստանձնած պատասխանատվությունից:

բ/ Փոխանցումն այլ Պայմանավորվող պետությունների համար ուժի մեջ չի մտնում մինչև Պետությունների միջև այն նախատեսող համաձայնագրի Խորհրդի կողմից գրանցման և 83-րդ հոդվածին համապատասխան հրապարակման պահը, կամ մինչև համաձայնագրի կողմ հանդիսացող Պետության կողմից այդ համաձայնագրի գոյության և

կարգավորման առարկայի մասին այլ շահագրգիռ Պայմանավորվող պետության կամ Պետությունների իշխանություններին ուղղակիորեն տեղեկացնելու պահը:

գ/ Վերը նշված «ա» և «բ» կետերի դրույթները կիրառվում են նաև 77-րդ հոդվածով նախատեսված դեպքերում»:

3. Որոշում է, որ Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության Գլխավոր քարտուղարը Արձանագրությունը կազմի անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և իսպաներեն, ընդ որում, բոլոր տեքստերը կհամարվեն հավասարազոր՝ ներառելով վերը շարադրված փոփոխության տեքստը և հետևյալ դրույթները.

ա/ Արձանագրությունը ստորագրվում է Ասամբլեայի նախագահի և Գլխավոր քարտուղարի կողմից,

բ/ Արձանագրությունը բաց է վավերացման համար՝ վերը նշված Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին կոնվենցիան վավերացրած կամ դրան միացած ցանկացած Պետության կողմից,

գ/ վավերագրերն ի պահ են հանձնվում Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությանը ,

դ/ Արձանագրությունն այն վավերացրած Պետությունների համար ուժի մեջ է մտնում 90-րդ վավերագիրն ի պահ հանձնելու օրվանից,

ե/ Գլխավոր քարտուղարն անմիջապես ծանուցում է բոլոր Պայմանավորվող պետություններին Արձանագրության յուրաքանչյուր վավերագրի ի պահ հանձնելու օրվա մասին,

զ/ Գլխավոր քարտուղարը վերը նշված Կոնվենցիայի բոլոր անդամ պետություններին ծանուցում է սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվա մասին,

է/ Արձանագրությունն՝ այն վերը նշված ժամկետից ուշ վավերացրած ցանկացած Պայմանավորվող պետության համար ուժի մեջ է մտնում վերջինիս վավերագիրը Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությանն ի պահ հանձնելու պահից,

Սույն Արձանագրությունը կազմվել է Կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից:

Ի հավաստումն որի, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության 23-րդ նիստի Նախագահը և Գլխավոր քարտուղարը, լիազորված լինելով Ասամբլեայի կողմից, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Մոնրեալ քաղաքում, 1980 թվականի հոկտեմբերի 6-ին՝ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և իսպաներեն, կազմված միասնական փաստաթղթի տեսքով, ընդ որում բոլոր լեզուներով տեքստերը հավասարազոր են: Սույն Արձանագրությունն ի պահ է հանձնվում Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության արխիվներին, իսկ դրա հաստատված պատճենները Կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից ուղարկվում են 1944 թվականի դեկտեմբերի 7-ին Չիկագոյում ստորագրված Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին Կոնվենցիայի բոլոր անդամ պետություններին:

***Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1999 թվականի դեկտեմբերի 8-ին:**